

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ 1800—1870 ԹԹ.

Վ. Ս. ԵՐԿԱՆՑԱՆ

Հայ ժողովրդի պատմության մեջ դպրոցն իր ուրույն տեղն ունի: Հին և նոր ժամանակների մեր գրեթե բոլոր ուսումնասիրողներն առանձնահատուկ ուշադրություն են դարձրել մշակույթի և մասնավորապես դպրոցի ու կրթության կարևորությանը և աշխատել են ըստ ամենայնի լուսաբանել դրանց զարգացման ընթացքը: Այդ ուղղությամբ վերջին տարիներին զգալի գործ կատարեցին սովետահայ ուսումնասիրողները: Պրոֆ. Մ. Սանթրոսյանի և Գ. Նազիկյանի մենագրությունները<sup>1</sup> ուղագրավ ներդրում են հայկական դպրոցի նոր շրջանի պատմության լուսաբանության մեջ: Այս գործում անգնահատելի ծառայություն ունի ընդմիջատակ պատմաբան Ա. Ալպոյաճյանը: Նա երկար տարիներ վաղվել է մեր դպրոցի պատմության հարցերով և ստեղծել «Պատմություն հայ դպրոցի» մեծածավալ աշխատությունը, որի առաջին մասը հրատարակվել է Կահիրեում, 1947 թ.: Աշխատության երկրորդ մասը, որն ընդգրկում է դպրոցի պատմության նոր շրջանը, ձեռագիր վիճակում է և գտնվում է Մաշտոցի անվան մատենադարանում:

Ներկա ուրվագծի նպատակն է հրապարակի վրա ևղած գրականության և այլ նյութերի ուսումնասիրության հիման վրա ընդհանուր գծերով ամբողջացնել հայ դպրոցի անցած ուղին 1800—1870 թթ. ընկած ժամանակահատվածում:

Թեև 19-րդ դարի XIX դ., հայկական դպրոցը կանգնեց որակական փոփոխության պահանջի առաջ: Բուրժուականացման ընդհանուր պրոցեսն այդ ժամանակներից աստիճանաբար իր մեջ ներքաշեց նաև հայ ժողովրդի արևելյան ու արևմտյան հատվածները, ծավալվեցին ազգային համախմբման երևույթներ, խարխիվեցին կյանքի միջնադարյան ֆեոդալական հիմքերը: Այս ամենի շնորհիվ, նոր սերնդի կրթությունը ժամանակի սահանջներին համապատասխանեցնելու հարցերը առաջնակարգ նշանակություն ստացան: Դրանում շահագրգռված հասարակական ուժերն ընդլայնեցին պայքարը հանուն դպրոցի ժողովրդականացման ու աշխարհականացման, հանուն մանկավարժական նոր, առաջավոր մեթոդների կիրառման, կրթական միասնական սիստեմ մշակելու: Պետական օժանդակությունից ղուրկ հայկական դպրոցը և՛ Ռուսաստանում, և՛ Թուրքիայում զարգանում էր մեծամեծ դժվարություններով: Տասնամյակներ պահանջվեցին, որպեսզի երկար փորձություններից հետո, 1860-ական թվականների վերջերին ստեղծվեն դպրոցական կանոնադրություններ:

1800—1870 թթ. հայ դպրոցի պատմության այն շրջանն էր, երբ հասարակության լավագույն ուժերի ջանքերով և բուն ժողովրդի օժանդակությամբ նախադրյալներ ստեղծվեցին կրթության գործը նոր աստիճանի բարձրացնելու:

<sup>1</sup> Մ. Ս. Սանթրոսյան, Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964: Գ. Ա. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը (19-րդ դարի սկզբից: մինչև 19-րդ դարի 50—60-ական թվականները), Երևան, 1969:

համար: Այլ կերպ ասած, այդ շրջանը, հատկապես 1850—60-ական թվականները, արևելահայ ու արևմտահայ նոր դպրոցի գաղափարական հիմնավորման և կազմակերպական նախապատրաստության շրջան էր: Այս տարիներին էր նաև, որ դպրոցն սկսեց դանդաղորեն տարածվել Արևելյան ու Արևմտյան Հայաստանի գավառներում:

Հողավածում ուրվագծվում է միայն հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների դպրոցի պատմությունը, քանի որ կրթական հիմնական շարժումը ծավալվում էր այդ հատվածների շրջանակներում:

Հայ ժողովրդի երկու հատվածներում էլ մինչև XIX դ. գոյություն ունեցած սակավաթիվ եկեղեցական ու վանական դպրոցներում տիրապետում էր ուսուցման միջնադարյան-սխոլաստիկ, խալֆույական ձևը: Աշակերտները սովորում էին մեխանիկորեն, անգիր անելով, չկար որոշակի կարգ ու կանոն, մարմնական պատիժը համարվում էր ուսուցման պրոցեսի անբաժան մասը: Խիստ սահմանափակ էր յուրացվող գիտելիքների շրջանակը:

Շատ ավելի տարածված էր խալֆաների, երևելիների, վարպետ-տուտուների, տիրացուների, քահանաների նախաձեռնությամբ կազմակերպվող տնային, մասնավոր, անհատական ուսուցումը, որը ոչ մի հսկողության չէր ենթարկվում: Հաղորդվող գիտելիքների չափն ու բովանդակությունը կախված էր «ուսույալ» վարժապետի խղճից ու կարողությունից:

Նոր դպրոցն իր ուղին սկսեց միջնադարյան սխոլաստիկ ու անկանոն ուսուցման դեմ պայքարելով: Այդ պայքարը ծայր առավ հայաշատ այն գաղթօջախներում (Աստրախան, Մոսկվա, Քիֆլիս, Կ. Պոլիս, Ջմյուռնիա), որտեղ կենտրոնացել էին բուրժուական զարգացման ուղին թևակոխած խավերն ու մտավորականությունը, ավելի շուտ էին տարածվել ժամանակի առաջավոր գաղափարները և առևտրա-արտադրական ոլորտներում գործելու համար կերթված մարդկանց պահանջն ավելի վաղ էր զգացվել:

Պատմական պայմանների բերումով, զրկված լինելով պետականությունից և գտնվելով օտարի տիրապետության տակ, հայ ժողովրդի երկու խոշոր հատվածներն էլ ստիպված էին կրթական գործի պաշտոնական կազմակերպումն ու տնօրինությունը թողնել եկեղեցուն: Ե՛վ Ռուսաստանում և՛ Թուրքիայում հայ եկեղեցին էր ժողովրդի միակ ճանաչված պաշտոնական ներկայացուցիչը: Եկեղեցին, որն ավանդաբար և տիրողների հաճությամբ օժտված էր որոշ ինքնավարությամբ, ձգտում էր ժողովրդի կրթության գործը պահել իր ազդեցության տակ, շատ դեպքերում խոչընդոտելով նորի տարածմանը: Սակայն, մյուս կողմից, ենթարկվելով աշխարհիկ տարրերի և բուն ժողովրդի օրօրի աճող ճնշմանը և իր ազդեցությունը չկորցնելու համար, նա ստիպված էր ընդառաջել նոր դպրոցի սկզբունքներին: Կազմավորվող դպրոցը զարգանում էր ինքնագործ եղանակով, իսկ նրա պահպանության հոգսը հիմնականում ծանրացած էր ժողովրդի վրա: Դարձյալ սեփական նախաձեռնությամբ էր, որ հայ հասարակության ընդերքում ծնվում և ժողովրդական լուսավորության ասպարեզ էին նետվում նորի անձնուրաց կազմակերպիչները: Այս բոլորի հետ միասին հայ դպրոցը դեռ պետք է անհավասար կռիվ մղեր պետական ոտնձգությունների, օտար միջամտությունների դեմ, պայքարեր իր ազգային դիմագիծը պահպանելու և սեփական միջոցներով կատարելագործվելու և զարգանալու համար:

Այդ հանդամանքները ստեղծում էին հայ նոր դպրոցի գոյության ու զարգացման բարդ ու հակասական պայմաններ, խիստ ուրույն առանձնահատկություններ:

Նոր ժամանակների հայ դպրոցի կազմավորումն սկսվեց այն շրջանում, երբ հասարակության մեջ դեռևս խիստ սակավ էին կարող ուժերը: Այդ պատճառով էլ սկզբում նորաշունչ դպրոցները կենտրոնանում էին գերազանցապես բաղաձայնում և զարդանում մեծ դժվարությամբ: Սակայն հիմնականում 1830-ական թվականներից էր, որ հենվելով այդ սակավաթիվ դպրոցների վրա, կրթվելով Գորպատի, Մոսկվայի, Իտալիայի ու Փարիզի բարձրագույն ուսումնական հաստատություններում, հայ առաջադեմ երիտասարդությունը կարողացավ պարզել լուսավորական շարժման դրոշը և անդուլ պայքար ծավալել միջնադարյան հնամաշ կրթական սիստեմի դեմ:

Հասարակական պայքարը նոր դպրոցի համար XIX դ. կեսերին լայն չափեր ընդունեց ինչպես արեւելահայ, այնպես էլ արեւմտահայ հատվածներում և մեծապես նպաստեց ժողովրդի մեջ կրթության նկատմամբ սեր ու հավատ արմատավորելուն:

Նոր ժամանակներում հայ ժողովրդի երկու հատվածներում հասարակական-քաղաքական կյանքն ընթանում էր միմյանցից խիստ տարբերվող պայմաններում, որոնք իրենց կնիքն ու ազդեցությունն էին թողնում նաև դպրոցի վրա: Այդ պատճառով արեւելահայ ու արեւմտահայ կրթական գործը զարգացման տարրեր փոխելու ու առանձնահատկություններ ունեցավ: Այսպես, շնորհիվ այն բանի, որ արեւմտահայերի կրթական շարժման կենտրոնները՝ Կ. Պոլիսն ու Ջմյուռնիան, ավելի երկարատև ու մոտիկից էին շփվում Եվրոպայի հետ, ապա հնի հաղթահարումն այստեղ ավելի շուտ սկսվեց ու լայն ծավալ ստացավ: Արեւելահայերի մոտ այդ պրոցեսը ծայր առավ որոշ ուշացումով, Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո: Արեւելահայերը կարողացան կարճ ժամանակում լրացնել բաց թողածը և ավելի կազմակերպված ու միատարր ձև տալ դպրոցին, նրանց դպրոցական կանոնադրություններն ավելի որոշակի ու կիրառելի դարձան: Սինչեռ, թուրքական իրավակարգի հետամնաց սխիզոնը, հայերի նկատմամբ վարվող բռնության ու հալածանքների քաղաքականությունն արեւմտահայ կրթական գործիչների տարիների ջանքերը թողնում էին կեսկատար: Բացի այդ, և՛ թե արեւմտահայ դպրոցը զարգանում էր ֆրանսիական ազդեցության տակ և հիմնականում ոչինչ չունեի վերցնելու տիրող ազդի դպրոցից, ապա արեւելահայերը մեծապես կրում էին անհամեմատ ավելի բարձր կանգնած ռուսական և նրա միջոցով՝ գերմանական դպրոցական սիստեմի ազդեցությունը:

Այս իսկ պատճառով նպատակահարմար է դպրոցի պատմությունը ներկայացնել ըստ հայ ժողովրդի երկու խոշոր հատվածների:

Արեւելահայ դպրոցը. նախքան Արեւելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը Երևանում և Նախիջևանում կար մեկական դպրոց եկեղեցիներին կից, ընդամենը հարյուր աշակերտով, գործում էին նաև քահանաների մի շարք աննշան մասնավոր դպրոցներ<sup>2</sup>: Գոյություն ունեի նաև էջմիածնի՝ դեռ XVII դ. ստեղծված, ժառանգավորաց դպրոցը, որը ներսես Աշտարակեցու ջանքերով

<sup>2</sup> И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, էջ 902—903:

վերակենդանացել էր 1813 թ.։ Համեմատաբար ավելի բարվոք էր վիճակը Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայաբնակ վայրերում՝ Աստրախանում, Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Մուլդավիայում, ինչպես նաև Թիֆլիսում։ Հիշատակություն կա, որ դարասկզբին հայկական դպրոց է եղել նաև Պետերբուրգում<sup>3</sup>։

Դաստիարակել գահին հավատարմահպատակ շինովնիկներ, տեղական ազգերին մղել դեպի ռուսացման ոլորտը. սրանք էին ցարիզմի կրթական քաղաքականության նպատակները։ Սակայն երկար ժամանակ երկրամասի միակ արքունի դպրոցը 1802 թ. Թիֆլիսում հիմնված ազնվականական ուսումնարանն էր, որը 1830 թ. վերածվեց գիմնազիայի։ 1829 թ. ընդունվեց Անդրկովկասի պետական ուսումնարանների առաջին կանոնադրությունը, որից հետո մի շարք վայրերում հիմնվեցին գավառական ուսումնարաններ, այդ թվում Շուշիում (1830), Ախալցխայում (1831), Երևանում (1832), Նախիջևանում (1837), Ալեքսանդրապոլում (1847)։ Ցարական իշխանությունները հենց սկզբից արտոնյալ պայմաններ ստեղծելով արքունի դպրոցների համար, նպատակադրվեցին խափանել ազգային դպրոցները, պայքարեցին հայ եկեղեցու դեմ՝ աշխարհականների զավակներին արգելելով հաճախել հոգևորի անվան տակ հանդես եկող ազգային դպրոցները։

1848 թ. ստեղծվեց Կովկասյան ուսումնական շրջանը, որին ենթարկվեցին արքունի, մասնավոր, մահմեդական բոլոր դպրոցները, բացի ուղղափառ և հայ լուսավորչական եկեղեցու տնօրինության տակ գտնվողներից։ 1860 թ. ուսումնական շրջանը վերացվեց և կրթական գործի անմիջական ղեկավարությունը հանձնվեց վարչական մարմիններին։ Ի թիվս մյուսների, ստեղծվեց նաև ուսումնարանների Երևանի դիրեկցիան։ 1867 թ. ընդունվեցին նոր կանոններ, որով կովկասյան արքունի դպրոցը հիմնականում հավասարվեց կայսրության դպրոցական սիստեմին, այնտեղ տիրապետող դարձավ դասային սկզբունքը, ուսուցման պարտադիր լեզուն ընդունվեց ռուսերենը։ Վերականգնվեց Կովկասյան ուսումնական շրջանը։

Չնայած ցարիզմի վարած ազգահալած քաղաքականությանը և տեղական մարմինների հարաճուն դրդումներին, այս անգամ ևս հայկական դպրոցները դուրս մնացին պետական անմիջական ենթակայությունից։ Սա թեևադրված էր արտաքին-քաղաքական շարժառիթներով, որոնք բխում էին Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ հայերին օգտագործելու մտադրությունից։ Այդ առթիվ Ռուսաստանի ներքին գործերի մինիստրության հոգևոր գործերի ղեկարտամենտի դիրեկտոր կոմս Սիվերսը դեռևս 1864 թ. գրում էր. «Տեղական իշխանությունների միջոցով, բարոյական ազդեցությամբ հայ հասարակություններին մղել ուսումնական հաստատությունների հիմնադրմանը, նրանց հատկացնելով դասավանդման հնարավոր ազատություն, որպեսզի դեպի Ռուսաստան ներգրավվեն Թուրքիայի և Պարսկաստանի հայ պատանիները»<sup>4</sup>։

Այս ամենին զուգընթաց սկսեց աճել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր դպրոցների թիվը։ Արքունի դպրոցներ բացվեցին նաև նոր Բայազետում, Օրդուբադում, Ադուլիսում, Երևանի գավառային դպրոցը 1868 թ. վե-

<sup>3</sup> Տե՛ս Մ. Հ. Սանթրոսյան, նշվ. աշխատ., էջ 310—311։

<sup>4</sup> «Положение 11 марта 1836 г. и Эчмиадзинские католиконы под русским владычеством», Исторический очерк, Тифлис, 1904, էջ 36։

րածվեց պրոդիմնադիտայի, իսկ կովկասում գործող ս. Նինայի անվան կանանց բարեգործական ընկերությունը 1850 թ. Երևանում բացեց ս. Հովհաննիսյան իգական պանսիոնը, որտեղ սովորում էին հայ, ռուս, ադրբեջանցի աղջիկները:

Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո արևելահայերի համար նյութատավոր պայմաններ են ստեղծվում պետական ուսումնական հաստատություններին ղուգահեռ զարգացնելու ազգային դպրոցը: Պարսկական դարավոր լծից ազատագրված հայ ժողովրդի արևելյան հատվածում ընդգծված հետադարձություն է առաջանում կրթական գործի նկատմամբ: Խիստ հատկանշական է Երևանի ազատագրման առթիվ համաքաղաքացիներին 1828 թ. դրած Մ. Բաղիադյանի նամակը. «Ախ, իմ լավ քաղաքացիք, ախ հոգիս հարայայ կանչում, հին խմորն թողէք, նոր Ազգի լուսավորութեան ու պայծառութեան հետևեցէք»:

Համընդհանուր ոգևորության շրջանում մեկը մյուսի հետևից հրապարակ են դադարեցրել մասնավոր հայկական դպրոցները 1834 թ. կովկասյան իշխանությունները, հաշվառումից հետո, փակում են առանց պաշտոնական թույլտվության բացված 595 դպրոց, որից 108-ը հայկական՝ մոտ 1800 աշակերտով<sup>6</sup>: Արանք խալֆայական տիպի դպրոցներ էին:

Առաջին տարիների անորոշությանը և անկարգությանը որոշ չափով վերջ տալու եկավ հայ եկեղեցու համար կառավարության մշակած 1836 թ. մարտի 11-ի կանոնադրությունը, որը հայտնի է «Պոլոթենիե» անունով: Հաշվի առնելով դարավոր ավանդությունը և Ռուսաստանի արտաքին-քաղաքական հարաբերություններում էջմիածնի հոգևոր կենտրոնի ունենալիք դերը, ցարիզմը հայ եկեղեցուն իրավունք էր տալիս տնօրինելու հայերի կրթական գործը: «Պոլոթենիեում» նախատեսվում էր էջմիածնում բացել հոգևոր ճեմարան, իսկ թեմական կենտրոններում՝ հոգևոր դպրանոցներ: Սակայն կանոնադրությունը թերի էր ու հակասական: Պարզորոշություն չէր մտցված դպրոցների տիպերի, աստիճանների, ուսման ժամալի ու տեղության, արքունի և հայկական ազգային դպրոցների փոխհարաբերության հարցերում:

Արդեն 1837 թ. Անդրկովկասում կար պաշտոնապես ճանաչված 21 հայկական դպրոց<sup>7</sup>: Նույն տարում թեմական հոգևոր դպրոցի վերածվեց Ներսես Աշարակեցու Թիֆլիսում ստեղծած դպրոցը, բացվեցին Երևանի, և 1838 թ.՝ Շուշիի թեմական դպրոցները: 1844 թ. Շամախիում ևս բացվեց հոգևոր մի դպրոց, որը պետք է թեմականի դեր կատարեր, սակայն գտնվելով նյութական ծանր պայմաններում, խիստ անկանոն ընթացք ունեցավ և երբեք չբարձրացավ սովորական ծխական դպրոցի մակարդակից: Նույնը կարելի է ասել 1838 թ. Ասարախանում բացված թեմական դպրոցի մասին:

Կյանքի հետամնացության և կարող ուժերի բացակայության պատճառով սկզբնական շրջանում արևելահայ ազգային դպրոցները դեռևս խիստ ցածր մակարդակ ունեին և կրում էին խալֆայականության կնիքը: Սա մի շրջան էր, երբ սիլվային դպրոցը նոր էր սաղմնավորվում, երբ այն, բախվելով ժողովրդի տգիտությանը, սայթաքում էր, երբնում: Զկար քիչ թե շատ կանոնավոր ծրար-

<sup>5</sup> «Հայ մանկավարժներ» (XIX դար), դիրք Ա, Երևան, 1958, էջ 40:

<sup>6</sup> Ա. Երիցյան, Պատմություն 75-ամեայ գոյութեան ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, հ. Ա, Թիֆլիս, 1898, էջ 271:

<sup>7</sup> Մ. Ն. Սանթրոսյան, նշվ. աշխատ., էջ 319:

գիր, կանոնադրություն, ղեկավար մարմին: Ուսուցումը հիմնականում տարերային բնույթ էր կրում: Դպրոցների մեծ մասը դեռևս միայն պարզ գրագիտություն էր սովորեցնում, շկար ուսուցման որոշակի ժամկետ, աշակերտի տարիքային սահմանափակում: Հատկանշական է նաև, որ ավելի առաջադիմած և տարրականից բարձր մակարդակի հասած դպրոցներում մինչև 1850—60-ական թվականները, կադրերի և դասագրքերի բացակայության պատճառով, միշտ բացառապես թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, մեծ մասամբ ավանդվում էին ուսերենով:

Հատկապես խառնաշփոթ վիճակ էր դպրոցների տիպերի հարցում: Հայկական դպրոցը հանդես էր գալիս ամենաբազմազան անվանումների տակ՝ եկեղեցական, վանական, հոգևոր, ազգային, ծխական, ժողովրդական: Սակայն դրանց մեջ էական տարբերությունները շատ քիչ էին և դրանք տարրականի մակարդակ ունեցող դպրոցներ էին: Զգալի տեղ էին գրավում նաև մասնավոր դպրոցները:

Որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում 1827 թ. Շվեյցարիայի Բազել քաղաքի ավետարանական քարոզիչների Շուշիում բացած բարեկարգ դպրոցը, որտեղ դասավանդումը տարվում էր հայերենով: Հաջորդ տարին դպրոցն արդեն ուներ 130 աշակերտ: Միսիոներները ստեղծել էին տպարան, որտեղ տպում էին աշխարհաբար գրքեր: Դպրոցի սաները շքակա գյուղերում և Շուշիում շուտով բացեցին ևս 5 դպրոց: Ցարական կառավարությունը 1835 թ. փակեց այս բոլոր դպրոցները՝ ընդառաջելով հայ եկեղեցու բողոքներին:

Նոր շրջանի հայկական լուսավորության հնագույն օջախներից է Ասարախանը, որտեղ XVIII դ. 70—80-ական թվականներից գործել են փոքրիկ դպրոցներ, իսկ 1796 թ. այստեղ է տեղափոխվում նոր նախադասի ս. Խաչ վանքի որբանոց-դպրոցը: Այնտեղ գործել է նաև Կ. Շահվերդյանի հայ կաթոլիկական դպրոցը: 1817 թ. Աստրախանում բացվում է հոգևոր դպրոց, որը 1838-ին վերածվում է թեմականի: Սակայն առանձնահատուկ դեր է կատարել Աղաբաբյան դպրոցը՝ որը արևելահայերի առաջին բարեկարգ և որակյալ նորատիպ ուսումնական հաստատությունն է: Դպրոցը պաշտոնապես բացվել է 1810 թ. մեծահարուստ Ն. Աղաբաբյանի ու նրա երկու եղբայրների միջոցներով: Ըստ պայմանի դպրոցը պետք է գտնվեր տեղի գիմնազիայի (և ոչ թե հայ եկեղեցու) անմիջական հսկողության տակ և այնտեղ պետք է սովորեին չքավորների զավակներ, դասավանդվեին նաև առևտրի հետ կապված գիտելիքներ<sup>8</sup>: Այս պայմանները, սակայն, կատարվեցին միայն առաջին տարիներին: 1822 թ. դպրոցը լրիվ անցավ պետության տնօրինության տակ, իսկ 1838 թ. վերածվեց գավառային երեքդասյա ուսումնարանի: Չնայած դրան և այն հանգամանքին, որ ուսուցումը (բացի կրոնից և հայոց լեզվից) տարվում էր ուսերենով, դպրոցում մինչև 1865 թ. սովորում էին միայն հայեր, տիրապետում էր ազգային ոգին:

Հայ ժողովրդի լուսավորության և մշակութային կյանքի ամենանշանավոր երևույթներից էր Մոսկվայի Լազարյան ճեմարանը<sup>9</sup>, որը ժամանակակիցների բնորոշմամբ «մայր դպրոց» էր, «սերմնարան հայոց դպրոցաց»:

<sup>8</sup> Տե՛ս Իստորիչեսկայա շափեսկա օբ Աստրախանսկոմ արմյանսկոմ Աղաբաբոսկոմ սեզնոմ սուսլուսնե ս 1810 սո 1910 ց., սոստ. Ա. Ի. Սարեմուսոբ, Աստրախան, 1913, էջ 7:

<sup>9</sup> Թեև ուսումնական հաստատությունը տարրեր ժամանակներում ստացել է զանազան անվանումներ, հայ իրականության մեջ ընդունված է եղել կոչել ուղղակի՝ Լազարյան ճեմարան:

Լաղարյան ճեմարանի ստեղծման գաղափարը հղացել էր Ռուսաստանում գործող խոշոր կալվածատեր ու արդյունաբերող Հովհաննես Լաղարյանը: Նրա կտակած գումարներով Լաղարյան տոհմի մյուս ներկայացուցիչները ձեռնամուխ են լինում ուսումնարանի հիմնադրմանը: 1814 թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ ուսումնարանի հիմնադրման հանդեսը և նախորդ տարվանից Աստրախանից Մոսկվա փոխադրված երիտասարդ Հ. Ալամդարյանը սկսեց պարպմունքներն առաջին աշակերտների հետ: 1815 թ. հիմնականում ավարտվեց ուսումնական շենքի կառուցումը<sup>10</sup>:

Նախասեսվում էր, որ ուսումնարանում կրթություն կստանան 30—40 հայ աղքատ աշակերտներ: Սակայն շատ կարճ ժամանակում ճեմարանը գերազանցեց ըուր համեստ նպատակադրումները և շուտով վերածվեց բազմապրոֆիլ ու բազմաստիճան հաստատության: Սկզբում դպրոցը կոչվում էր «Լաղարյան ուսումնարան հայկական ծագման երեխաների դաստիարակության համար» և նրա նպատակն էր սովորողներին նախապատրաստել համալսարան ընդունվելու, ինչպես նաև նրանցից պատրաստելու հայկական դպրոցների ուսուցիչներ: Աստիճանաբար ուսումնարանն ընդունում էր արևելագիտական թեթև: Մնալով որպես մասնավոր հաստատություն, 1824 թ. ճեմարանը վեր է ածվում արևելյան լեզուների գիմնազիայի, իսկ 1827 թ. կոչվում է «Արևելյան լեզուների Լաղարյան հայկական ինստիտուտ»: 1830-ական թվականներին ճեմարանը հավասարեցվում է երկրորդ կարգի պետական ուսումնական հաստատություններին: 1841 թ. էջմիածնի պահանջով ճեմարանում բացվում է հատուկ հոգևոր բաժին, որը պետք է հոգևորականներ և ուսուցիչներ պատրաստելու նրկու տարի անց մտցվում է նաև առևտրական գիտությունների հատուկ դասընթաց:

1848 թ. ճեմարանը թևակոխում է իր զարգացման երկրորդ շրջանը. կառավարության հաստատած նոր կանոնադրությամբ այն վեր է ածվում առաջին կարգի բարձրագույն ուսումնական հաստատության՝ «Արևելյան լեզուների Լաղարյան ինստիտուտ» անունով: Գիմնազիական 6-դասյա դասընթացին, որը համապատասխանում էր ճեմարանի հիմնական նպատակներին, ավելանում է և Լրկդասյա մասնադիտական-լիցեյական բաժինը՝ ընդգծված արևելագիտական թևով, որն իր ընդգրկումով հավասար էր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնին: Բացի այդ, 1851 թ. բացվում է նախապատրաստական բաժինը, որը խիստ կարևոր գեր խաղաց ճեմարանում հայկական սղին վառ պահելու գործում. այստեղ մասնավորապես հայոց լեզվի դասավանդումը գրված էր բարձր հիմքերի վրա:

Ճեմարանի այս պրոֆիլը պահպանվեց մինչև 1870-ական թվականները, երբ հաստատությունը նորից արմատական վերակառուցման ենթարկվեց:

Լաղարյան ճեմարանը, որ սկզբում ստեղծվել էր որպես զուտ ազգային հաստատություն, աստիճանաբար սկսեց կատարել նաև պետական բնույթի լուրդիրներ: Ցարական կառավարությունը, հավատարիմ իր ազգահալած քաղաքականությունը, շատ շուտով արգելքներ հարուցեց դպրոցի ինքնուրույն դարգացման առջև, աշխատեց այն դարձնել իր արևելյան քաղաքականությանը նսրաստող կենտրոն: Ճեմարանի հոգարարձու Լաղարյանները, թեև աշխատում

<sup>10</sup> Ճեմարանի հիմնադրման տարեթվի ճշգրտման մասին մանրամասն տե՛ս Ա. Հ. Ի գ ն ա տ-յ ա ն, Լաղարյան ճեմարան, Նրեան, 1969, լհ 22—30:

էին պահպանել հաստատութեան սկզբնական սրտֆիլը, ստիպված տեղի էին տալիս կառավարութեան առջև: 1824 թվականից սկսած ճեմարանի զլխավոր պետի սրտականութունները կատարել են ցարական մի շարք բարձր պաշտոնյաներ (Ա. Արակչեկ, Ա. Խ. Բենկենդորֆ, պետական խորհրդի նախագահ Ա. Ֆ. Օրլով, գաղտնի խորհրդական Վ. Պ. Բուտկով, Դ. Ա. Տոլստոյ): Դասավանդումը ճեմարանում տարվում էր ռուսերենով, այնտեղ սովորում էին նաև որոշ թվով ռուսներ և կովկասյան ազգութունների ներկայացուցիչներ: Սակայն դասավանդվող հայագիտական առարկաները (հայոց պատմություն, մատենագիտություն և այլն), հայ դասախոսների ու սովորողների գերակշռությունը, տիրող հայկական ոգին միշտ էլ շեշտել են ճեմարանի ազգային բնույթը:

Լաղարյան ճեմարանի սաներից շատերը շարունակել են կրթությունը Ռուսաստանի համալսարաններում, իրենց նվիրել գիտական, հասարակական, մանկավարժական գործունեության: Ճեմարանը զգալի աշխատանք է կատարել հայոց լեզվի դասագրքերի ստեղծման ու հրատարակության ուղղությամբ: Խոշոր է ճեմարանի դերը արևելահայ նոր գրական լեզվի մշակման գործում: «Արևելահայ գրական գործիչները, — այդ առթիվ գրել է Հ. Աճառյանը, — կարող էին ընդունել արևմտահայ գրական լեզուն, որ արդեն պատրաստ էր, և փոքր աշխատանքով հարմարեցնել արևելահայ ժողովրդի լեզվակալ պահանջներին: Բայց այդպես չեղավ: Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երևանի բարբառն է և որի հեղինակն է համարվում Մոսկվայի Լաղարյան ճեմարանի ուսանողությունը: Այստեղ ամեն կողմից հավաքված հայ աշակերտները սովորական գործածության մեջ հետզհետե կոկում են իրենց լեզուն, մասնավորը տեղի է տալիս ընդհանուրին և կամաց-կամաց այդ կոկված մաքուր լեզուն դառնում է խոսակցական ընդհանուր լեզու նույն դպրոցի սաների մեջ»<sup>11</sup>:

Այն պայթյալը, որ ծավալել էին Լաղարյան ճեմարանի առաջադեմ ուսուցիչները հանուն աշխարհաբարի (Մ. Նալբանդյան, Ս. Նաղարյան, Ս. Շահազիդ և ուրիշներ) վճռական նշանակություն ունեցավ և լայնորեն տարածվեց ողջ արևելահայ իրականության մեջ: Ճեմարանը, հանձին ականավոր գիտնական Մկրտիչ էմինի, հանդիսացավ Ռուսաստանում հայագիտական դպրոցի օրրանը: Լաղարյան ճեմարանում էր, որ շնորհիվ աշակերտական թատերական խմբերի, 1850-ական թվականներից սկսեց կազմավորվել արևելահայ նոր թատրոնը:

1829 թ. ճեմարանն ունեցավ և իր տպարանը, որից հետո մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել ամենաբաղադրան բնույթի գրքեր:

Լաղարյան ճեմարանն իր բարերար ազդեցությունն է թողել հայ կյանքի գրեթե բոլոր բնագավառների, սակայն ամենից ավելի՝ կրթության ու լուսավորության վրա: Ճեմարանի առավել աչքի ընկած դասախոսների ու սաների անունների հիշատակումն արդեն շատ բան կարող է ասել: Քննարկվող շրջանում Լաղարյան ճեմարանում են դասավանդել Հ. Ալամդարյանը (1814—1824), Սերովբե վարդապետ Կարնեցին (1815—1822), Միքայել Սալլանթյանը (1822—1840-ական թթ.), Մկրտիչ էմինը (1838—1882), Ս. Սուլթանշահյանը (1831—1841), Մսեր Մսերյանը (1848—1873), Ստ. Նաղարյանը (1849—

<sup>11</sup> Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Երևան, 1951, էջ 497—498:

1879), Մ. Նալբանդյանը (1853—1854), Ոսկան Տեր-Հովհաննիսյանը (1854—1859), Ճեմարանի սաներից են Դ. և Հ. Արզանյանները, Հ. Երեցփոխյանը, Մ. Պատկանյանը, Կ. Շահնազարյանը, Ա. Խուզաբաշյանը, Գ. Ախվերդյանը, Պ. Շանշյանը, Մ. Սանասարյանը, Գ. Խատիսյանը, Զ. Մսերյանը, Ա. Բախտյարյանը, Ս. Մանդինյանը, Գ. Դոդոխյանը, Ս. Շահազիզը, Ռ. Պատկանյանը, Բ. Պատկանյանը, Գ. Խալաթյանը և շատ ուրիշներ:

Արևելյահայերի կրթական հնադույն և աչքի ընկնող օջախներից է նոր Նախիջևանը: Քաղաքի հիմնադրման առաջին տարիներից արդեն այստեղ Հովսեփ Արղությանի ջանքերով հիմնվում է մի փոքրիկ դպրոց (1784), իսկ 1790-ականների սկզբին՝ ս. Խաչ վանքին կից մի վարժարան՝ որբերի համար: 1795 թ. հիմնվում են Սահակյան և Մեսրոպյան դպրոցները՝ հնդկահայերի նյութական օժանդակությամբ: 1802 թվականից այստեղ գործել է նաև կազարյանների միջոցներով բացված մի դպրոց: Կրթական գործը նկատելիորեն աշխուժանում է 1806—09 թթ., երբ այստեղ աշխատում էր Ս. Պատկանյանը:

Կրթական գործը նոր վերելք է ապրում, երբ նոր Նախիջևանում երևում են կաղարյան Ճեմարանի առաջին սաները և 1827 թ. Աստրախանից կրկին այստեղ է զալիս Ս. Պատկանյանն ուսում ստացած իր որդիներին՝ Գաբրիելի ու Պետրոսի հետ: Գ. Պատկանյանի ղեկավարությամբ 1832—36 և 1851—53 թթ. այստեղ գործել է հոգևոր դպրոց, իսկ 1837—45 թթ. նա ունեցել է իր մասնավոր դպրոցը: Քաղաքում եղել են նաև զգալի թվով մասնավոր այլ դպրոցներ, որոնց թիվը 1838 թ. հասել է 16-ի<sup>12</sup>, Նորարարությամբ աչքի են ընկել կաղարյան Ճեմարանի սաներ Ս. Տիգրանյանի, Թ. Խատամյանի և Ա. Քարեկյանի դպրոցները, որոնք թեև կարճ կյանք են ունեցել, բայց նշանավորվել են նոր Նախիջևանում թատերական գործի հիմնավորումով: Նոր Նախիջևանում եղել է նաև տիտական ծխական դպրոց (1811-ից), որը, սակայն, պահվել է հասարակության միջոցներով և 1849 թ. վերածվել գավառական ուսումնարանի:

Նոր Նախիջևանի հասարակական կյանքի հետ սերտ առնչություն ունեցող Ղրիմի Թեոդոսիա քաղաքում 1858 թ. հիմնված Խալիբյան ուսումնարանը: Այն ստեղծվել էր նորնախիջևանցի մեծահարուստ Հ. Խալիբյանի միջոցներով և Փարիզից Ռուսաստան վերադարձած եկեղեցական-կրթական գործիչ Գ. Այվադյանի նախաձեռնությամբ: 1860 թ. Փարիզից Թեոդոսիա է գալիս նաև մանկավարժ Խ. Գալֆայանը: 1865 թ. տեսչի պաշտոնում Գ. Այվադյանին փոխարինում է Ս. Տիգրանյանը: Խալիբյան դպրոցի հիմնադրման հետ ցարիզմը որոշակի նպատակներ էր կապում. նա մտադիր էր այնտեղ ընդգրկել Արևելքի երկրներից եկած հայ պատանիների, որոնք հետագայում կզառնային ուսակալան ազդեցության տարածողներ: Այդ նպատակով նույնիսկ 1865 թ. պետությունը տարեկան 11 հազար ռուբլու նպաստ էր նշանակել դպրոցին<sup>13</sup>, Սակայն ցարիզմի հույսերը շարդարացան և 1870 թ. վերջին կառավարության կարգադրությամբ դպրոցը փակվեց:

Հայ ժողովրդի լուսավորության գործում, սակայն, առանձնահատուկ նշանակություն ունեն կրթական այն օջախները, որոնք ստեղծվեցին բուն ժողովրդի բնակության հիմնական վայրերում կամ դրանց անմիջական մոտ հա-

<sup>12</sup> Մ. Ն. Սահարյան, նշվ. աշխատ., էջ 301:

<sup>13</sup> Գ. Այվադյան, Պատմություն Խալիբյան ուսումնարանին ազդիս հայոց (1858—1871), Թիֆլիս, 1880, էջ 188:

րևանությամբ: Այս տեսակետից բացառիկ է Թիֆլիսի ու նրա կրթական հաստատությունների դերը:

Դարասկզբին արդեն Թիֆլիսում գործում էին մի քանի աննշան մասնավոր դպրոցներ: Դրանցից առաջինը Ն. Գալստյանի խալֆայատիպ դպրոցն էր, բացված 1795 թ.: Գրեթե նույն ժամանակ այստեղ դպրոց է բացում Պոլսից տեղափոխված Ս. Պատկանյանը<sup>14</sup>, 1815 թ. Ներսես Աշտարակեցին վանքի եկեղեցուն կից հիմնում է մի փոքրիկ դպրոց՝ քահանաներ պատրաստելու համար: 1817 թ. այստեղ աշխատելու է հրավիրվում հմուտ հայկաբանի հռչակ ստացած Պոզոս վրդ. Ղարադաղցին, որին աշակերտել են Մ. Թաղիադյանը, Խ. Աբովյանը, Ստ. Նաղարյանը: Նույն թվականին մասնավոր դպրոց է բացում նաև հայ-կաթոլիկ Ն. Մամուլյանը: 1830-ական թվականներին բացվում են տասից ավելի հայկական մասնավոր դպրոցներ, որոնք միայն պարզ գրադիտություն էին սովորեցնում: Մինչդեռ Դավիթ և Հակոբ Արղանյանների (1837), Խ. Աբովյանի (1837), Գ. Երեցփոխյանի (1842), Ն. Շահնազարյանի (1841), Հ. Օրբելու (1844), Գ. Պատկանյանի (1847) մասնավոր դպրոցները, որոնք պաշտոնական ճանաչում ունեին, տալիս էին անհամեմատ ավելի բարձր կրթություն, ուսուցումն այնտեղ տարվում էր նոր մեթոդներով:

Սակայն ամենից նշանավոր եղավ Ներսիսյան դպրոցը:

Վրաստանի թեմի առաջնորդ, հեռատես ու շրջահայաց Ներսես Աշտարակեցին ծրագրում է հիմնել մի խոշոր ու բարեկարգ ուսումնարան, որը պետք է կենտրոնականի դեր կատարեր Անդրկովկասի հայկական ազգային դպրոցների մեջ: Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ Թիֆլիսի հայ հասարակությունը զգալի գումարներ է հատկացնում դպրոցին, որի բացումը տեղի է ունենում 1824 թ.: Մոսկվայից այստեղ է տեղափոխվում Հ. Ալամդարյանը և ղեկավարում դպրոցի կազմավորումը: Սորաստեղծ դպրոցն արագորեն հասարակական լայն ճանաչման է արժանանում: Այնտեղ դասավանդվում էին հայոց, ռուսաց, պարսից, ֆրանսերեն լեզուներ, թվաբանություն, նկարչություն, աշխարհագրություն, պատմություն: Արդեն երեք տարի հետո դպրոցն ունենում է 6 դասարան: Դժբախտաբար դպրոցի վերելքը երկար չի տևում, և 1830 թ., երբ գործից հեռանում են Ներսես Աշտարակեցին ու Հ. Ալամդարյանը, այն անկում է ապրում, մի քանի անգամ փակվում ու վերաբացվում է: Ներսիսյան դպրոցը 1837 թ. վերածվում է թեմական հոգևոր դպրատնոցի: Շնորհիվ տեսուչներ Գաբրիել ու Միքայել Պատկանյանների և Պետրոս Շանշյանի ձեռնարկած միջոցառումների 1850-ական թվականներից դպրոցը կանոնավոր ընթացք է ստանում, բարձրանում է ուսուցման կուլտուրան, մտցվում են նոր առարկաներ՝ բնագիտություն, մարդակազմություն, հանրահաշիվ, երկրաչափություն, ֆրանսերեն, ղուրս են մղվում խալֆայականության տարրերը, արգելվում են մարմնական պատիժները, սահմանվում է կանոնավոր ամառային արձակուրդ, կատարվում է դաս-դասարանային բաժանում: Դպրոցի հիմնական նպատակներից մեկն էլ դառնում է ուսուցիչների պատրաստումը: Պ. Շանշյանի համառ ջանքերով Ներսիսյան դպրոցն առաջինն է անցնում առարկաների լրիվ հայերեն դասավանդմանը. ռուսաց լեզվով էին դասավանդվում միայն ռուսաց լեզուն, Ռուսաստանի պատմությունն ու աշխարհագրությունը: Այս հանգամանքը խոշոր նշանակություն ունեցավ ընդհանրապես արևելահայ դպրոցի հետագա

14 Եր. Շահագիր, Տեր-Գաբրիել Պատկանյան, Թիֆլիս, 1910, էջ 2:

դարգացման համար և միաժամանակ մեծապես նպաստեց հայ նոր գրական լեզվի մշակմանը: Այս շրջանում Ներսիսյան դպրոցն արդեն մոտեցել էր միջնակարգի մակարդակին. չհաշված նախապատրաստականները, դպրոցն ուներ 5 դասարան (1863-ից): Ներսիսյան դպրոցը դառնում էր արևելահայ կրթական գործի դրոշակակիրը:

XIX դ. առաջին կեսին որոշ նշանակություն ստացան նաև Երևանի ու Շուշիի թեմական հոգևոր դպրոցները, սակայն նրանք, երկարատև դոյուսթյուն պահպանելով ու գտնվելով նյութական մշտական կարիքի մեջ, միայն դարավերջին կարողացան գերազանցել տարրական կրթության մակարդակը: Այդ շրջանում երկու դպրոցներն էլ մշտապես զգում էին ուսուցիչների ու աշակերտների սուր պակաս և բազմապատ քիչ հիմնականում մեկ նախապատրաստական և 2—3 հիմնական դասարաններից: Ավանդվում էին հայոց, ռուսաց, պարսից լեզուներ, ճարտասանություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, կրոն: 1849—57 թթ. Երևանի, իսկ 1844—45 և 1852—55 թթ. Շուշիի թեմական դպրոցները նույնիսկ փակված էին: Նկատելի աշխուժացում է սկսվել այս դպրոցներում 1860-ական թվականներին, մասնավոր՝ Շուշիում, որտեղ 1863—64 թթ. թեմականի տեսուչն էր Պ. Շանշյանը: 1864 թ. կոնսիստորիայի տպարանն անցնում է Շուշիի դպրոցին ու նպաստում նրա վերելքին:

Երևանում այս շրջանում ավելի կարևոր դեր է խաղացել արքունի գավառային դպրոցը՝ հատկապես Խ. Աբովյանի տեսչության տարիներին (1843—48): Աբովյանը պայքարել է խավարամիտ հոգևորականության կամայական նույնությունների դեմ, ջանացել է աշակերտների կրթությունը վարել նոր, առաջավոր մանկավարժական մեթոդներով, մեծ ավանդ է ներդրել հայոց լեզվի ուսուցումը կարգավորելու գործում: 1846 թ. նա աշակերտների ուժերով ստեղծել է դպրոցական թանգարան, որը նորություն էր դարակեսի հետամնաց երևանի համար:

Աչքի ընկնող մյուս դպրոցներից հիշատակելի է 1830 թ. Ախալցխայում կարինից գաղթած հայերի առաջնորդ Կարապետի եպիսկոպոսի հիմնած հոգևոր ուսումնարանը, որը, փաստորեն, 1811 թ. կառուցվում նրա բացած դպրոցի շարունակությունն էր: 1836 թ. նույն եպիսկոպոսը Ախալքալաքում բացում է Մեսրոպյան դպրոցը: Հատկապես ճանաչում էր ստացել Կարապետյան ուսումնարանը, որը 1851 թ. ուներ 300 աշակերտ: Կրթական կյանքն զգալիորեն աշխույժ էր նաև նոր զարգացող Ալեքսանդրապոլում: 1830-ական թվականների վերջինից այստեղ սկսում է ձևավորվել մի դպրոց, որը երկար երեքուամյակներից հետո վեր է ածվում ս. Փրկիչ եկեղեցու կից հոգևոր դպրոցի: 1852—53 թթ. սկսած ուսուցման ընթացքը կանոնավորվում է: Եռանկյա վերատեսչության կառավարած այս դպրոցը, որ ավելի հայտնի էր Վիճակային անվամբ, 1863 թ. արդեն ուներ երեք դասարան, յոթ ուսուցիչ, այնտեղ ավանդվում էր 11 առարկա<sup>15</sup>:

Այս ամենով հանդերձ արևելահայ կրթական գործը դեռևս լայն տարածում չէր գտել: Ռուսաստանում դարակեսին սկսված տնտեսական ու հասարակական վերելքը իր շրջանակների մեջ առավ նաև արևելահայությունը: Բուրժուական

<sup>15</sup> Ա. Ղլտճյան, Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի, Ալեք-պոլ, 1912, էջ 37:

նացող հայ հասարակությունը ազգային համախմբման հարաճուն պրոցես էր ապրում, որի անխուսափելի ուղեկիցն էր լուսավորական շարժումը: Նոր դըպրոցի ջատագույնները պայքարում էին հանուն այն բանի, որ Լեհիստանի կրթությունը տարվի ազգային լեզվով: «Դպրոցը հարկավոր է հիմնել և պահպանել այնտեղ, ուր է աղբը»<sup>16</sup>, — գրում էր Նալբանգյանը:

Առանձնապես սուր կերպով էին դրվում դպրոցների ժողովրդականացման ու աշխարհականացման, նրանցում կրոնական սխուլաստիկան մերժելու և ժամանակակից մեթոդներ կիրառելու հարցերը: Մեծ կարևորություն էր տրվում մատաղ սերնդի առաջին դաստիարակին՝ կնոջ-մորը կրթելու խնդրին:

Հրապարակ եկան զանազան ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց հիմնական նպատակն էր նպաստել կրթության ու լուսավորության տարածմանը: Այսպես, Ալեքսանդրապոլում հիմնվեցին՝ «Հատիճի վանքի և հոգևոր դպրոցի ընկերությունը» (1850), «Ընթերցասիրացը» (1862), «Բարենպատակը» (1869), Նոր Նախիջևանում՝ «Մարդասիրականը» (1853) և «Բարեգործականը» (1860), էջմիածնում՝ «Ընթերցասիրացը» (1860), Շուշիում (1858) և Երևանում (1862) ստեղծվեցին հասարակական գրադարաններ, իսկ Թեոդոսիայում (1860) և Թիֆլիսում (1861) բացվեցին հասարակական կիրակնօրյա դպրոցներ՝ մեծահասակների համար: Այս ընկերությունների մեջ ամենից արդյունավետը և երկարակյացը, սակայն, եղավ հայրենասեր բժիշկ Գ. Ռոստոմյանի ջանքերով 1864 թ. Բաքվում հիմնված «Մարդասիրական ընկերությունը», որի նպատակն էր կրթություն տարածել չբավոր բնակչության շրջանում և օժանդակել դպրոցներին<sup>17</sup>: 1865—66 թթ. ընկերությունն արդեն Բաքվում բացում է երկու դպրոց: Սակայն ընկերության գործունեությունն ավելի լայն ծավալ է ստանում 1870 թ. հետո:

Այս տարիներին կազմավորվեց ու սկսեց զարգանալ նաև արևելահայ իգական դպրոցը: Իգական դպրոցներ ստեղծելու փորձեր արվեցին Ախալցխայում (1851—53), Թիֆլիսում (1850-ական թթ.), Նոր Նախիջևանում (1857): Կյանքի առաջընթացը և հին նախապաշարմունքների հաղթահարումը հնարավորություն տվեց 1860-ական թվականներին ավելի հաստատուն հիմքերի վրա դնել աղջիկների կրթությունը: Պ. Պոռչյանը հանդիսացավ իգական կանոնավոր կրթության ջատագույնը: 1861 թ. նա «Գայանյան» կոչվող մի դպրոց հիմնեց Թիֆլիսում, որը սակայն կարճ կյանք ունեցավ: 1864 թ. Պոռչյանի, Պ. Շանշյանի, Գար. Մուրադյանի նախաձեռնությամբ Շուշիում բացվեց Մարիամյան դպրոցը: Երկու տարի անց նույնպես Պոռչյանի նախաձեռնությամբ հիմնվեց Երևանի Գայանյան դպրոցը: 1869 թ. բացվեց Թիֆլիսի Գայանյան դպրոցը: Հայկական իգական դպրոցներ բացվեցին նաև Վ. Ազուլիսում (1867), Բաքվում (1866), Ախալցխայում (1870) և մի շարք այլ վայրերում:

Լուրջ ուշադրություն դարձվեց հայկական դպրոցները դասագրքերով ապահովելու գործին: Հայերեն դասագրքեր արդեն ստեղծվել էին դարասկզբին, որոնք դանդաղորեն դուրս էին մղում խալֆայական դպրոցների ավանդական գրքերը: Դեռևս 1781 թ. Պետերբուրգում հրատարակվել էր Գ. Խալաբադյանի «Ալբեբենարանը», իսկ 1788-ին՝ Կղեոպատրա Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի դիտութեան» ռուս-հայերեն այբբենարան-ընթերցարանը, որոնք զգալի

<sup>16</sup> Մ. Նալբանգյան, Ընտիր կրկեր, Երևան, 1953, էջ 262:

<sup>17</sup> ՀՊԿՊԱ, ֆ. 27, գ. 55, էջ 46:

օժանդակութիւնն էին հայ դպրոցին: XIX դ. 20—40-ական թվականներին Մոսկվայում, ապա նաև Պետերբուրգում, Թիֆլիսում, Շուշիում, էջմիածնում հրապարակ եկան մի շարք այբբենարաններ, ընթերցարաններ, քերականութիւն, պատմութիւն, թվաբանութիւն, վայելչապնդութիւն դասագրքեր, բառարաններ: Դրանք, սակայն, դեռևս հեռու էին դպրոցի պահանջները բավարարելուց. նրանցում զգալի էր հին սխալաստիկ մեթոդների ազդեցութիւնը: 1850-ական թվականներից այս գործում զգալի բարեփոխումներ կատարվեցին: Հայոց լեզվի ուսուցումը բարելավելու սեփականից մեծ նշանակութիւն ունեցավ Խ. Աբովյանի «Նախաշավղի» սկզբունքների՝ գրուսուցման հնչական մեթոդի վերականգնումը 1860-ական թվականներին, ելք Թիֆլիսի դիմնագիտի մի խումբ հայ աշակերտներ (Գ. Տեր-Ալեքսանյան, Ա. Երիցյան, Զ. Գրիգորյան, Գ. Բաբայան և ուրիշներ) այդ մեթոդով այբբենարան կազմեցին և սկսեցին ձրի դասավանդել ժխական դպրոցում: Իսկ Պետերբուրգի հայ ուսանողները 1869 թ. հրատարակեցին այդ մեթոդին նվիրված Ս. Մանդինյանի «Հայերեն կարգալ և դրել ուսուցանելու հրահանգը»: Հրապարակ եկան նաև մի շարք այլ ինքնուրույն և թարգմանական դասագրքեր:

Արևելահայ դպրոցի աշխարհականացման ու ժողովրդականացման, նրա հետագա կանոնավոր դարգացման համար խոշոր նշանակութիւն ունեցավ 1850—60-ական թվականներին նրանց շուրջը ծավալված հասարակական պայքարը, որի կենտրոնում էր գտնվում Թիֆլիսի ներսիսյան դպրոցը:

Դեռևս 1848 թ. ներսես Աշտարակեցին, տեսնելով, որ ժողովուրդը սկսել է հեռանալ հոգևոր թեքում ստացած դպրոցից, հայտարարեց, որ «հայազգի մանուկների կրթութիւնն զործում հոգևորականք և աշխարհականք պարտական են միասին ձեռք-ձեռքի տված աշխատել»<sup>18</sup> և ստեղծեց մի խորհրդարան: 1851 թ. այդ խորհրդարանի կազմում մնացին միայն երեք աշխարհական, սակայն նրանք էլ հաշվետու շէին ժողովրդի առաջ և գործում էին կաթողիկոսի թելադրանքով: Այս հանդամանքը սրեց հարաբերութիւնները հոգևոր իշխանութիւնի և դպրոցի ժողովրդականացման խնդրով շահագրգռված հասարակութիւնի միջև:

Դպրոցի տեսուչ Պ. Շանշյանի մտքած բարեփոխումները հանդիպում էին կղերամիտ եռյակ հոգաբարձութիւնի և հոգևորականութիւնի ուժեղ դիմադրութիւնը: Վերջիններս գտնում էին, որ կրթական գործի ղեկավարը եկեղեցին է, իսկ ժողովուրդը միայն պետք է նյութական օժանդակութիւն ցույց տա: Այս մտայնութիւնն ավելի ուժեղացավ ներսեսի մահից հետո (1857), Վրաստանի թեմական առաջնորդ Սարգիս եպս. Զալալյանի օրոք: Դպրոցի ղեմակրատացման կողմնակիցներ՝ Պ. Շանշյանը, Գր. Իղմիրյանը, Գ. Խատիսյանը, Պ. Սիմոնյանը, Հ. Էնֆիաճյանը, Մ. Պատկանյանը գտնում էին, որ կրթական գործի տերը ժողովուրդն է: Պայքարը զնալով սուր կերպարանք էր ընդունում: «Սա մի երկունքի շրջան էր, — գրում է Ստ. Մալխասյանը, — որտեղ մանկավարժական նոր սկզբունքներ, առարկաների լայն ծրագիր, իրավունքների ու պարտավորութիւնների սահմանադրութիւն՝ առաջին անգամ երևան եկան՝ հին դպրոցի ու նորան հատուկ կարգերի տեղը բռնելու»<sup>19</sup>:

<sup>18</sup> Ա. Երիցյան, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան ներսիսեսն հայոց հոգևոր դպրոցի, էջ 437:

<sup>19</sup> Ստ. Մալխասյան, Պատմութիւն ներսիսեսն հոգևոր դպրոցի յոթանասունհինգամեայ շրջութեան (1824—1899), Թիֆլիս, 1900, էջ 83:

Ջալալյանականների ճնշման հետևանքով Շանշյանը և մի քանի առաջագիմականներ հեռանում են դպրոցից: Աշակերտության մեջ տեղի են ունենում հուղումներ: Նորընտիր կաթողիկոս Մատթեոսը, որ զգալիորեն կրում էր Պոլսի սահմանադրական շարժման ազդեցությունը, 1859 թ. արձակում է հին հոգաբարձությունը և ժողովրդի ընտրած մասնաժողովին պատվիրում առաջարկներ ներկայացնել: Պայքարը նոր ուժով է բորբոքվում: Արմատականները Երեմիա Արծրունու ղեխավորությամբ ներկայացնում են հինգ հիմնական կետից բաղկացած առաջարկություն, ըստ որի դպրոցի նյութական միջոցները նրա սեփականությունն էին համարվելու՝ անկախ հոգևոր իշխանությունից, դպրոցը պետք է ընդարձակվեր և հասցվեր գիմնագիական աստիճանի, ուսուցումը ձրի էր գարձվելու, ավարտողների համար հոգևոր կոչումը պարտադիր չպետք է լիներ և, ամենակարևորը, դպրոցը պետք է կառավարեր ժողովրդի ընտրած հոգաբարձությունը՝ թեմական առաջնորդի նախագահությամբ:

1861 թ. հունիսի 9-ին կաթողիկոսն ընդունեց այս պայմանները և դրպրոցին պաշտոնապես տվեց «Ներսիսյան» անվանումը: Մշակվեց նաև նոր կանոնադրությունը, որ 1864 թ. արժանացավ կովկասի փոխարքայի հավանությունը:

Թիֆլիսում սկսված պայքարն արձագանք գտավ Շուշիում: Այստեղ ևս 1859 թ. հասարակական ժողովը կաթողիկոսին դիմեց թեմական դպրոցի համար կանոնադրություն մշակելու և ընտրովի հոգաբարձության իրավունք տալու պահանջով: 1861 թ. հաստատվեցին Շուշիի և Երևանի (1860) թեմական դպրոցների կանոնադրությունները, որով երկու դպրոցներն էլ ունեցան ընտրովի հոգաբարձություններ:

1836 թ. հետո այդ դպրոցները ոչ մի ընդհանուր կանոնի չէին ենթարկվել: Նոր կաթողիկոս Գևորգ IV-ը առաջնակարգ նշանակություն տվեց ազգային կրթության կաղմակերպմանը: 1867 թ. էջմիածնում ստեղծվեց ուսումնական հանձնաժողով, որը մշակեց և հաջորդ տարին հրապարակեց ծխական դպրոցների կանոնադրությունը: Դրանով առաջին փորձն էր արվում կարգավորելու տարածվող տարրական դպրոցների ընթացքը<sup>20</sup>: Այդ դպրոցները դուրս էին դալիս թեմականների տնօրինությունից և հանձնվում էին ընտրովի հոգաբարձությունների իրավասությունը:

Դպրոցական այս առաջին կանոնադրությունը, անտարակույս, թերություններ ուներ (չկար դասաժամերի տեղումնություն, ուսումնական ծրագրերի, ուսուցիչների իրավունքների, դպրոցների պահպանության միջոցների որոշակիություն, ուսուցումը տարվելու էր կլոր տարին), սակայն դա կրթական գործում միասնություն ստեղծելու առաջին լուրջ փորձն էր:

1869 թ. հաստատվեցին նաև թեմական դպրոցների ընդհանուր և վանական դպրոցների կանոնադրությունները, սակայն սրանք էական նշանակություն չունեցան, որովհետև թեմական յուրաքանչյուր դպրոց շարունակեց առաջնորդվել իր նախկին կանոնադրությամբ, իսկ վանական դպրոցները հետագայում առանձին վարձացում չապրեցին:

Այս ամենի շնորհիվ արևելահայ դպրոցն զգալի առաջընթաց ապրեց: Արդեն գոյություն ունեցող դպրոցների բարենորոգման հետ միասին երևան եկան նորերը և դրանց մեջ տիրապետող դարձավ եկեղեցական-ծխական դպրոցը:

<sup>20</sup> «Արարատ», 1868, հ. 2, էջ 70:

րոցը՝ որպես ազգային կրթության ստորին աստիճան: Դպրոցներն այժմ ավելի շատ սկսեցին տարածվել Անդրկովկասի հայաբնակ շրջաններում և բուն Արևելյան Հայաստանում: Էջմիածնի սինոդի տվյալներով 1871 թ. Անդրկովկասում արդեն կար մոտ 90 ազգային դպրոց (15-ը՝ իդական), 4194 աշակերտով և 230 ուսուցիչով. դրանցից 46-ը՝ Երևանի նահանգում<sup>21</sup>: Նույն 1871 թ. արքունի դպրոցների թիվը հասավ 56-ի<sup>22</sup>: Ա. Երիցյանը 1870 թ. համար արևելահայ դպրոցների թիվը (նաև Անդրկովկասից դուրս եղածներինը) հասցնում է 138-ի<sup>23</sup>:

Այսպիսով, արևելահայ դպրոցական գործը 1870-ական թվականների նախօրյակին զգալի առաջընթաց էր կատարել: Որոշակի նախադրյալներ էին ստեղծվել հաջորդ տասնամյակներում ազգային կրթությանը նոր մղում հաղորդելու համար:

## АРМЯНСКАЯ ШКОЛА В 1800—1870 гг.

В. С. ЕРКАНЯН

### Р е з ю м е

В результате проникновения буржуазных отношений в армянскую действительность с начала XIX в. в Восточной и Западной Армении началось преодоление средневекового схоластического обучения, появился тип школы, соответствующий духу нового времени. Благодаря оживленной общественной борьбе, стараниям передовой интеллигенции, новая школа, которая находилась в официальном ведении церкви, постепенно стала приобретать народный, светский характер. В середине века были предприняты конкретные шаги по созданию единых школьных правил и учебных программ, началось формирование национальной педагогической мысли. Новые школы стали появляться и в сельских местностях. Однако, это был период поисков новых организационных форм школы и идейного обоснования национального образования, когда создавались реальные предпосылки для развития народного просвещения в следующие десятилетия.

В школьном деле восточных армян переворот произошел после присоединения Восточной Армении к России, когда новые условия благоприятствовали общественному развитию. Следующим важным этапом были 1860-е гг., когда восточноармянская школа приобрела право выборного попечительного управления.

Значительными центрами образования в восточноармянской действительности были Московский Лазаревский институт, школа Нерсисян в Тбилиси, астраханская школа Агабабян, некоторые школы в Нор-Нахичеване, Ереване, Шуше, Александрополе и пр.

<sup>21</sup> Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 32:

<sup>22</sup> «Отчет по главному управлению Наместника Кавказского...», Тифлис, 1873, էջ 259:

<sup>23</sup> «Արձագանք», 1882, № 11: